Հաստատում եմ՝
«Երևանի մտավոր թերզարգացում ունեցող
երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ)» դպրոց ՊՈԱԿ-ի
տնօրեն----------Ա. Ենգիբարյան

9-րդ դասարանի դասղեկի տարեկան աշխատանքային պլան

2023-2024 ուս. տարի

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1.Կազմակերպչական աշխատանքներ

- ✓ Սանիտարահիգիենիկ միջոցառումների իրականացում,
- ✓ Դասասենյակի կահավորում,
- ✓ Դասագրքերի բաշխում,
- ✓ Տարհանման պլանի քննարկում,
- ✓ Դասալսումների իրականացում,
- ✓ Ամենօրյա հաճախումների ապահովում և գրանցում,
- ✓ Մատենավարության իրականացում:

2.Ուսումնադաստիարակչական աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

- ➢ Հետևել աշակերտների վարքին, կարգապահական նորմերի պահպանմանը, առաջադիմությանը, հասակակիցների ու մեծահասակների հետ ճիշտ փոխհարաբերությունների կառուցմանը::
- ➢ Աշխատանքներ իրականացնել՝ ուղղված դասարանում բարոյահոգեբանական ջերմ մթնոլորտի կառուցմանը:
- ➢ Հետևել աշակերտների հաճախումներին:
- ➢ Հետևել աշակերտների անհատական պլանների լրացմանը՝ հաշվի առնելով սովորողների անհատական առանձնահատկությունները, կրթական կարիքներն ու զարգացման առանձնահատկությունները: Մասնակից դարձնել նաև ծնողներին:

3. Հայեցի դաստիարակություն

Հոգևոր դաստիարակություն

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ, զրույցների, նկարչության, ծեփակերտման միջոցով ամրապնդել սովորողների պատկերացումները մեր կրոնի ու հավատքի վերաբերյալ՝ կարևորելով քրիստոնեության դերը հայ ժողովրդի պատմության ընթացքում:

Գեղագիտական դաստիարակություն

Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկը ինչ դեր ունի մեր կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերբերյալ: Կյանքից

բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ: Սովորեցնել արժևորել գեղեցիկը մեր կյանքում:

Հայրենասիրական դաստիարակություն

Աշակերտներին մասնակից դարձնել դպրոցում կազմակերպվող հայրենասիրական միջոցառումներին: Հայրենասիրության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ: Նշել մի շարք հերոսների (ֆիդայինների) անուններ, և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը:

Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը, որ կարող են գոյատևել աշխատանքի շնորհիվ և միջոցով: Ձևավորել պատասխանատվություն դպրոցի, դպրոցի շրջապատի, դասարանի մաքրության նկատմամբ: Սովորեցնել պահպանել գույքը, ակտիվ մասնակցություն ցուցաբերել յուրաքանչյուր աշխատանքին:

Բնապահպանական դաստիարակություն

Սերմանել սեր դեպի բնությունը, սովորեցնել բնության և շրջապատի աղտոտման հետևանքները, մասնակցել կանաչապատման աշխատանքներին:

Ֆիզիկական դաստիարակություն

Նպաստել սովորողների կոփմանը, ֆիզիկական որակների զարգացմանը, մասնակցել ֆիզկուլտուրայի դասերին: Համագործակցել ֆիզկուլտուրայի դասերին:

4.Դպրոց-ընտանիք կապը

Նպաստել ընտանիք-դպրոց համագործակցության ճիշտ կազմակերպմանը: Կարևորել, կազմակերպել ծնողների հաճախակի այցերը դպրոց, հետևել երեխաների առաջադիմության բարձրացմանը, հետևել երեխաների հաճախումներին, ծնողներին մասնակից դարձնել ԱՌԻՊ- ների մշակման աշխատանքներին, կազմակերպել ծնողական հանդիպումներ: Կազմակերպել ծնողական ժողովներ, ապահովվել ծնող-ուսուցիչ-աշակերտ եռակողմ կապը, որի շնորհիվ կշտկվեն հաճախումների, առաջադիմության, վարքի հետ կապված որոշ խնդիրներ:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
«Ով եմ ես»	1.09-09.09	Դասղեկ, ԴԱԿ
«Իմ ես»-ը	12.09-16.09	Դասղեկ, ԴԱԿ
«Ես հայ եմ»	19.09-23.09	Դասղեկ, ԴԱԿ
«Ես էլ քեզ նման եմ»	26.09-30.09	Դասղեկ, ԴԱԿ
«Իմ ընկերն ու ուսուցիչը»	03.10-08.10	Դասղեկ, ԴԱԿ
«Իմ ընկերները»	10.10-14.10	Դասղեկ, ԴԱԿ
«Մեր պարտականությունները»	17.10-21.10	Դասղեկ, ԴԱԿ
«Մենք և ուրիշները»	31.10-04.11	Դասղեկ, ԴԱԿ
«Մեր տարբերությունները»	07.11-11.11	Դասղեկ,ԴԱԿ
«Բոլորս տարբեր ենք, բայց ապրում ենք միասին»	14.11-18.11	Դասղեկ, ԴԱԿ
«Գնահատենք ինքներս մեզ »	21.11-25.11	Դասղեկ,ԴԱԿ
«Հարգանք»	28.11-02.12	Դասղեկ,ԴԱԿ
«Հանդուրժողականություն»	5.12-09.12	Դասղեկ,ԴԱԿ
«Համագործակցություն»	12.12-16.12	Դասղեկ,ԴԱԿ
«Եկեք նշենք տարեմուտը»	19.12-23.12	Դասղեկ,ԴԱԿ
«Մենք ուժեղ ենք միասին»	09.01-13.01	Դասղեկ,ԴԱԿ
«Համախմբվածություն»	16.01-20.01	Դասղեկ,ԴԱԿ
«Հայկական բանակի ուժը»	23.01-27.01	Դասղեկ,ԴԱԿ
«Կոնֆլիկտ:Կոնֆլիկտային իրավիճակների հաղթահարում»	30.01-03.02	Դասղեկ,ԴԱԿ
«Կոնֆլիկտների խաղաղ լուծման պատվիրանները»	06.02-10.02	Դասղեկ,ԴԱԿ
«Իմ ընտանիքը»	13.02-17.02	Դասղեկ,ԴԱԿ
«Ընտանիք և պարտականություն»	20.02-24.02	Դասղեկ,ԴԱԿ
«Իմ մայրիկը»	27.02-10.03	Դասղեկ,ԴԱԿ
«Բարոյականություն և իրավունք»	13.03-24.03	Դասղեկ,ԴԱԿ
«Ինչպես կուզեյի ապրել»	04.04-08.04	Դասղեկ,ԴԱԿ
«Ճիշտ ապրելու վարքականոններ»	11.04-15.04	Դասղեկ,ԴԱԿ
«Արդար, ազնիվ, օրինապահ»	18.04-22.04	Դասղեկ,ԴԱԿ
«Հարգենք Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը»	25.04-29.04	Դասղեկ,ԴԱԿ
«Ասացվածքի ամբիոն»	01.05-05.05	Դասղեկ,ԴԱԿ
«Ազգային զարթոնք»	08.05-12.05	Դասղեկ,ԴԱԿ
«Հայկական արհեստներ»	15.05-19.05	Դասղեկ,ԴԱԿ
«Ընտրում ենք մասնագիտություններ»	22.05-26.05	Դասղեկ,ԴԱԿ

Դասղեկ՝ Լ. Բերբերյան